

Ամստերդամ եւ տէր կանգնել իր սեփականութիւնը հանդիսացող տպարանին:

Առնելով այդ լուրը Ոսկան Երեւանցին եղբոր նամակը ներկայացնում է կաթողիկոս Յակոբ Զուղայեցուն եւ իրաւունք է ստանում տպարանում գործը շարունակելու համար Ամստերդամ ուղարկել իր աշակերտ Կարապետ Անդրիանացուն:

Աւելի ուշ՝ Ամստերդամից Աւետիսի գրած նամակի շարժառիթով, 1662 թուականի ամռանը (հաւանաբար օգոստոսին), կաթողիկոս Յակոբ Զուղայեցին էջմիածնում գումարում է ազգային ժողով՝ նուիրուած «Աստուածաշնչի» տպագրութեանը¹¹: Նկատի ունենալով տպագրի գրքի, յատկապէս «Աստուածաշնչի» հանդէպ ժողովրդի մէջ ծայր առած պահանջարկի բաւարարման խնդիրը, կաթողիկոսը որոշում է այդ նպատակով Եւրոպա ուղարկել Ոսկան Երեւանցուն: Յակոբ Զուղայեցին միաժամանակ Ոսկան Երեւանցուն յանձնարարում է (թերեւս թոյլատրում է) իր հետ Ամստերդամ տանել Հեթում թագաւորի «Աստուածաշնչի» ձեռագիրը¹²: Այդ ձեռագիրը Ղազար Բաբերդացւոյ (Վալաբեցու), ըստ Վուլգատայի խմբագրութեան, «Աստուածաշնչի» հետ մէկտեղ ժամանակին Ձաքարիա վարդապետ Վաղարշապատցին գնում է Կարինում: Նուիրաբերելով Յովհաննավանքին վերջինս անէծքով բանադրում է բոլոր նրանց, ովքեր կը յանդգնեն գողանալ կամ վանքից դուրս տանել այդ ձեռագրերը: Պէտք է ենթադրել, որ կաթողիկոսը լուծարում է բանադրանքը, եւ նրա գնած ձեռագրերը (երկու միաւոր) Յովհաննավանքից բերւում են էջմիածին: Անհաւանական է, որ այդ ձեռագրերի միջեւ տարբերութեան առիթով տեղի է ունեցել տարակարծութիւն եւ մտքերի

փոխանակութիւն: Հետեւանքը լինում է այն, որ կաթողիկոս Յակոբ Զուղայեցին Ոսկան Երեւանցուն յանձնարարում է իր հրատարակելիք Աստուածաշունչը «Գլխատել եւ տնատել ըստ Դաղմտականաց»: Կաթողիկոսի յանձնարարութիւնը Ոսկան Երեւանցին իր համար դարձնում է ոչ միայն սկզբունք, այլեւ իրականացնում է իր հրատարակած «Աստուածաշնչում»: Գիտակցելով, որ այդ մօտեցումը հետագայում կարող է իր համար բարդացումների ու բանավէճային մեղադրանքների առիթ դառնալ նա, աւելի ուշ, կաթողիկոսի յանձնարարականը մի նախադասութեամբ ամրագրում է իր տպագրած «Աստուածաշնչի» տիտղոսաթերթում:

Այդ ժողովից յետոյ Ոսկան Երեւանցին կաթողիկոսից ստանում է եպիսկոպոսական աստիճան եւ ապա մէկ-երկու շաբաթ անց «Իշխանութեամբ ու հրամանաւ վեհափառի... յաղագս տպման մատենիս այսօրիկ աստուածայնոյ...» մեկնում է Եւրոպա:

Յակոբ Զուղայեցին միաժամանակ համապատասխան կոնդակ է տալիս Ոսկան Երեւանցուն՝ ուղղուած Լիվոռնոյի հայրութեանը, որպէսզի նրանք նիւթական օգնութեամբ սատար կանգնեն վերջինիս հրատարակչական գործունէութիւն ծաւալելու համար:

Եւ այսպէս, 1662 թուականի սեպտեմբերի 27-ին կաթողիկոսական նուիրակ Ոսկան Երեւանցին, դուրս գալով էջմիածնից, հետիոտն, բանուկ ճանապարհով մեկնում է Ջմիւռնիա, իսկ այնտեղից ծովային երթուղիով հասնում է Լիվոռնո: Այստեղ նա հանդիպում է իր եղբորը՝ Աւետիսին, եւ նրանից վերցնում է տպարանի սեփականատիրացմանը վերաբերող փաստաթղթերը: Իբրեւ իրաւատէր՝ նա Լիվոռնոյից Կարապետ Անդրիանացուն

տալիս է համապատասխան յանձնարարականներ եւ ապա տեղի համայնքից չստանալով ակնկալուող նիւթական օգնութիւնը՝ մեկնում է Հռոմ: Այստեղ նա աշխատում է իրականացնել իր ստանձնած պարտաւորութիւնները, դիմում է այլեւայլ միջոցների, սակայն, հանդիպելով Սուրբ Գրոց հրատարակութիւնների առիթով վերը նշուած անյաղթահարելի դիմադրութեանը¹³, նորից մեկնում է Լիվոռնո:

1665 թուականի փետրուարի 20-ին Ոսկան Երեւանցին Լիվոռնոյում ջուղայեցի վաճառականներ Ստեփաննոս Խանենցի, Թէոդորոս Քթոշեցու եւ Պետրոս Զուղայեցու հետ կնքում է պայմանագիր, որով յիշեալ վաճառականները յանձն են առնում կատարել «Աստուածաշնչի» տպագրութեան համար պահանջուող ծախսերը: Չեռք բերելով ակնկալուած գումարի մի մասը՝ Ոսկան Երեւանցին շտապով մեկնում է Ամստերդամ: Կարապետ Անդրիանացու հետ իրականացնելով «Շարակնոց» կոչուող գրքի տպագրութիւնը, ինչպէս նաեւ հրատարակելով մի քանի այլ գրքեր, Ոսկան Երեւանցին սկսում է զուգահեռաբար լրջօրէն զբաղուել «Աստուածաշնչի» տպագրութեան նախապատրաստական աշխատանքներով: Զբաւարարուելով նախկինում իր կատարած աշխատանքներով «Աստուածաշունչը» շարուածքի տալուց առաջ Ոսկան Երեւանցին իր ձեռքի տակ եղած ձեռագրերը համեմատում է Վուլգատայի լատիներէն բնագրի հետ եւ գտնում է այն ոչ լիակատար, «այլ ծաղկաքաղ եւ համառօտ, ուստի թարգմանում է «...զբանս Յեսուայ որդւոյ Սիրաքայ», «զչորորդ գիրս Եզրասայ» եւ այլ հատուածներ: Թարգմանում է նաեւ լատինական «Աստուածաշնչի» ցանկը, որպէսզի «...ըն-

թերցողն դիւրաւ գտանէ ի մէջ գրոց զինդրելին իւրս»¹⁴: Բաժանելով զլուրները ենթավերնագրերից, կազմում է նաեւ այբենական ցանկ, լուսանցքային ծանուցումներ (համաբարբառը) եւ այլն¹⁵:

1666 թուականի մարտի 11-ին Ամստերդամում «Աստուածաշնչի» ձեռագիրը յանձնւում է տպարան շարուածքը իրականացնելու համար: Փորձանմուշների վրայ Ոսկան Երեւանցու գործադրած յատու ու տքնաջան աշխատանքից յետոյ, վերջապէս 1668 թուականի հոկտեմբերի 13-ին Ամստերդամում աւարտւում է հայ հոգեւորականութեան միտքը գրեթէ մէկ դար զբաղեցնող «Աստուածաշունչ» մատենի տպագրութիւնը¹⁶:

«Աստուածաշունչը», ըստ մեր ունեցած դիտարկումների, ունեցել է մինչ այդ նախադէպը չունեցող տպաքանակ եւ լայնօրէն տարածուել է ինչպէս Հաւաստան աշխարհում, այնպէս էլ այլուր՝ կաթողիկէ դաւանանքին յարող հայրութեան մէջ:

Այս առիթով անհրաժեշտ ենք համարում ուշադրութեան ներկայացնել մի իրողութիւն: Ոսկան Երեւանցին «Աստուածաշնչի» «Նոր կտակարան» կոչուող բաժնի տպագրութիւնը իրականացրել է բաժնի տարբերակով: Հայաստան ուղարկուող գրքերը ունեցել են 808 էջ ծաւալ, կուող գրքերը ունեցել են 26 էջ ծաւալ, իսկ կաթողիկէ դաւանանքին յարող հայրութեան մէջ վաճառքի հանուած օրիցնները ունեցել են 26 էջ ծաւալում¹⁷: Ընդ որում, այս տարբերակում Ոսկանը աւելացրել է «Աղօթք Մանասէ արքայի Յուդայի» եւ «Գիրք Եզրասայ չորրորդ» զուլինները, որոնք «Եօթնասանից» թարգմանութեան մէջ, ուստի նաեւ Հայաստան ուղարկուող տարբերակում համարուել են պարականոն:

